գրեց Օսմանին, խնդրելով նորանից օգնութիւն, գրեց նաեւ Մուաւիային, որ իրան ուղարկէ Ասորիքի եւ Միջագետքի ժողովրդից նոցա, որոնք կը կամենան կրօնի եւ աւարի համար կռուել։ Մուաւիան ուղարկեց նորան 1000 մարդ, որ Հաբիբ բնակեցրեց Կարինում, բաժանեց նոցա հողեր եւ նշանակեց նոցա այնտեղ պահապան։ Իսկ Օսման, ստանալով Հաբիբի գիրը, գրեց Սայիդ ի. Ալասի ի. Սայիդ ի. Ալասի ի. Ումայիին, որ նորա կառավարիչն էր Կուֆայում, հրամայելով Հաբիբին օգնութեան ուղարկել նորա մօտ եղած զօրքով Սալման ի. Ռաբիյա ալ-Բահլիին, որ նմանապէս Սալման ալ-Խայլի (հեծեալ) կը կոչուէր եւ ինքն ընտիր եւ քաջ զինուոր էր. նա գնաց Հաբիբի մօտ իւր 16.000 բաբելական զօրքով։ Մինչ այս, մինչ այն եկան եւ Ցոյները եւ բանակեցան Եփրատի մօտ. որովհետեւ Հաբիբի համար օգնական գունդը ուշացաւ, մուսլիմները գիշերով յարձակեցան թշնամեաց վերայ, սրի մատնեցին եւ կոտորեցին նոցանից շատերին։ Նոյն գիշեր Աբդալլահի մայրը, որ Եզիդ ալ-Կալբի դուստրն էր, հարցրեց իւր ամուսին Հաբիբին՝ «որտեղ է (մեր) տեսութեան տեղը, նա պատասխանեց՝ «անհաւատի՝ վրանում կամ դրախտում,. եւ երբ վերադարձաւ իւր վրանը, գտաւ այնտեղ իւր կնոջը։ Սալման ժամանեց, երբ մուսլիմները իրանց գործը վերջացրել էին թշնամիների հետ. Բաբելացիք իրանց մաս

զեւորուեցան դէպի Հայաստան՝ նորա բնակիչներին կողոպտելու դիտաւորութեամբ։ Ճանապարհի հեշտութեան եւ Պարսից թագաւորի դանդաղութեան շնորհիւ նոցա աջողեցաւ մտանել նորա երկիրը։ Նա ուղարկեց նոցա դէմ զօրք, որ ճակատեց նոցա հետ եւ սրի մատնեց նոցա. տպրեցան 10.000 մարդ, որոնց Անուշիրվան բնակեցրեց Ամրպատականում։»

1 Ցունաց կայսեր սովորական մականունն է Ամրաց-ցոց մօտ։